


ՖՐԱԳԻՔ

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՅԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՍԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ
ՄԵՆԿՎԱՐԺԱԿԱՆ, ԻՆԳՈՒՍՏՐԻԱԼ, ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱ-
ԿԱՆ, ՏՐԱՆՊՈՐՏԱՅԻՆ ՅԵՎ ԲԺԵԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈԽՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ. Կ.



ՀԽԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պրոլետարենք բոլոր յերկրների, միացե՛ք

ԱՅԼԻԳՎԱՆ Է 1961

ԾՐԱԳԻՐ

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՅԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱ-
ԿԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՅԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ 24923
-2826



**ԽՍՀՄ-ի ժԿԸ-ին կեց բարձրագույն
դպրոցի գործերի համամիութենական
կոմիտեն թույլատըրել և ոգովելու՝
մինչև հատսառվելը**

**Թարգմ. Խմբագիր՝ Հ. Ա.ԱՆՑԵԱՆ
Տեխ. Խմբ. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ
Սբբագրիչ՝ Կ. ԳԵՏՐՈՂԵԱՆ**

**Գլանվեալ լիադու՝ Տ-9573 Պատվեր № 165, Տիրաժ 2000
Հանձնված և արտադրության 16 մայիսի 1938 թ.
Ստորագրված և ապագրելու 27 մայիսի 1938 թ.**

**Ուսուցիչների Վորակավորման Խնոմիտութիւն տպարան,
Եւրեվան, Մարգարի փողոց № 17**

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարքսիզմ-լենինիզմի փիլիսոփայությունը մարդկային կուլտուրայի մեծագույն նվաճումն է, մարդկության ամենահետևողական և առաջավոր աշխարհայցքը:

Մատերիալիստական «զիալիկտիկան» յարքսիզմի հոգին են (Ստալին), Մարքս-լենինյան աշխարհայցքի տարածումը, Մարքսի, Ենդելսի, Լենինի, Ստալինի անպարտելի ուսմունքով, մատերիալիստական դիալեկտիկայի զինքով լայն մասսաներին զինելը բոլշեվիզմին տիրապետելու կարևորագույն խնդիրներից մեկն եւ Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասավանդան հիմնական խնդիրն է տիրապետել Մարքսի-Ենդելսի, Լենինի և Ստալինի ուսմունքի հիմունքներին, մասսաներին դաստիարակել մարքս-լենինյան աշխարհայցքով, ուսանողներին դաստիարակել բոլշեվիզման կուսակցությամբ և անհաշտելիությամբ կոմունիստական կուսակցության գծի համար մզվող պայքարում։ Հաստրակական-տնտեսական գիտությունների, նույն թվում և մարքս-լենինյան փիլիսոփայության ուսումնասիրան ուժը պարող աշխատանքը պետք է հիմնվի Լենինի և Ռոտալինի ցուցմունքների, «Պոլ ճամանեմ մարքսիզմ» ժորանավագի 1931 թվի վորոշման, «ԽՍՀՄ-ի պատմության» և «Նոր պատմության» դասագրքերի կոնսավեկաների վերաբերյալ ընկերներ Ստալինի, Ա. Ժունովի և Ս. Կիրովի դիտողությունների, ՀՍՄԿ(բ)կ կենտկոմի 1931 թվի վորոշման, «ԽՍՀՄ-ի պատմության» և «Նոր պատմության» դասագրքերի կոնսավեկաների վերաբերյալ ընկերներ Ստալինի, Ա. Ժունովի և Ս. Կիրովի դիտողությունների, ՀՍՄԿ(բ)կ պատմության դասագրքը կազմողներին ուղղած ընկեր Ստալինի նամակի, ինչպիս և բարձրագույն դպրոցի մասին ՀՍՄԿ(բ)կ կենտկոմի և ԽՍՀՄ-ի ժողովագուշան վրա։

Մարքսիզմի փիլիսոփայությունը մի դիտություն եւ, վորպահանջում եւ զիտության, փիլիսոփայության, սոցիալական դիտությունների պատմության և այն ամենի խորն ուսումնասիրությունը, վոր տալիս և ժամանակակիցից հասարակական կյանքի և դիտության զարգացումը։

Ծրագրի պատմա-փիլիսոփայական մասը նվիրված է մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի հիմնական ետապների ուսումնասիրամանը Այդ բաժնի ուսումնասիրությունը պետք է ոգնի ուսանողներին պարզելու Մարքսի-Ենդելսի՝ դիալեկտիկական մատերիալիզմի մշակման և զարգացման ուղիները։

Այդ հատվածի ուսումնասիրության ընթացքում պետք եւ

Հետեղականորեն կապ հաստատվի ուսումնասիրվող փիլիսոփա-
յական սիստեմների և քաղաքացիական պատմության, գիտու-
թյան ու կուլտուրայի զարգացման միջև:

Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմունք-
ներին վերաբերող հատվածները դասավորված են այնպիսի հե-
տեղականությամբ, վորպիսին արդեն արդարացված և դասա-
վանդման ամբողջ փորձով:

Պատմական մատերիալիզմի հիմունքներն ուսումնասիրելիս
անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել պարզելու մա-
տերիալիզմի և իդեալիզմի պայքարը սոցիոլոգիայի պատմության
մեջ, անհրաժեշտ ե ուսումնասիրել կոնկրետ պատմական նյութը
և ուսումնասիրվող հարցերը կապել դասակարգային պայքարի
պրակտիկայի ու ԽՍՀՄ-ում սոցիալիզմի շինարարության հար-
ցերի հետ: Ժամանակակից բուրժուական փիլիսոփայական ուղ-
ղությունների քննադատությունը զիտեղված և այդ հատված-
ների համապատասխան թեմաների մեջ:

Մարքսիզմի թշնամիների՝ ոպրատունիզմի, հականեղագո-
խական արողկեզմի և բուխարինականության, մենշևիկող իդեա-
լիզմի և մեխանիզմի գեմ մղված պայքարում կենինի-Ստալինի
կուսակցությունը պաշտպանեց և զարգացրեց մարքս-լինինյան
ուսմունքը: Մարքսիզմի փիլիսոփայության զարգացման լինին-
յանստալինյան հտապը ուսումնասիրելիս ուսանողները պետք ե-
նորը կերպով ըմբռնեն այդ պայքարի թեորետիկական ու քա-
ղաքական իմաստն ու նշանակությունը և զինվեն թշնամիներին
բոլշևիկորնեն մերկացնելու և ջախջախելու կարողությամբ: Այս
պատճառով զամբնթացի այդ հատվածի բոլոր թեմաները
պետք և ուսումնասիրվեն բոլշևիզմի պատմության և մարքսիզմին
թշնամի հոսանքների գեմ կենինի-Ստալինի կուսակցության
մղած պայքարի հիմնական հտապների հետ:

Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասավանդու-
մը և ուսումնասիրությունը պետք ե գտնվի զիտական բարձրու-
թյան վրա և հազեցված լինի բոլշևիկյան կուսակցականությամբ:
Մարքս-լինինյան աշխարհայցքով մասսաներին դաստիարա-
կելը սլահանջում և վճռական պայքար մղել սխոլաստիկայի, վե-
րացականության, գոհենիկ սոցիոլոգիզմի և ուսանողներին ձևա-
կան մոռեցում ցույց տալու գեմ: Այդ թերությունները մինչեւ
այժմ ել տեղի ունեն դասավանդման մեջ և զասագրքերում:

Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմնական

կրույժների պարզաբանման համար պետք է լայնորեն ոգտաշղոթել փաստական մատերիալը՝ որինակներ, իլյուստրացիաներ, վորոնցով այնքան հարուստ են Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի յիրկերը և վորոնց մեջ խորն ու սպառիչ բացատրություն և արվում պատմության, գիտության և արդիականության բոլոր կարեռագույն յերեւությներին։ Դրամեկակիկան չի կարելի որինակների գումար դարձնել սակայն նրա ուսումնասիրման համար անհրաժեշտ ե լայնորեն ոգտագործել կոնկրետ նյութը, փայլուն որինակները և իլյուստրացիաները։

Անհրաժեշտ ե վորոշ միասնություն մտցնել դիալեկտիկական և պատմական մատերիալզմի գասընթացի դասավանդման կազմակերպման և մեթոդիկայի մեջ։

ա) Գիլիսոփայությունն ուսումնասիրել ԲՈՒՀՆերի բարձր կուրսերում, այն ժամանակ նա կմիմնի գիտելիքների վորոշ պաշարի՝ պատմության, բնագիտության; քաղաքատնտեսության և այլ գիտելիքների վրա։

բ) Պասավանդման հիմնական մեթոդը պետք է լինի պրո-ֆեսորի գասախոսությունը, վորը տալիս ե գասընթացի հարցերին սիստեմատիկ հետևողական և լիակատար լուսաբանություն, իսկ սրան պետք ե հետեւ ուսանողների ինքնուրույն աշխատանքը սկզբնազբյուրների վրա։

գ) Ուսանողների ինքնուրույն աշխատանքը դեկավարելու և այդ աշխատանքի ուսակություններին տիրապետելուն ոգնելու համար, կազմակերպվում են գողենտների և ասիստենտների կոնսուլտացիաներ։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների հիմնական յերկերը պետք ե ուսումնասիրվեն ամբողջապես, վորի համար դոցենտների և ասիստենտների դեկավարությամբ կազմակերպվում են խմբային պարապմունքներ։

Հանձնարարված գրականությունը չի բաժանվում պարտադիր և լրացուցիչ գրականության։ Անհրաժեշտ գրականության ծագալը ամերիններն են վորոշում համապատասխան այն ժամանակի, վորը արվում ե ուսանողների ինքնուրույն աշխատանքին։

Դրամեկտիկական և պատմական մատերիալիզմի ներկա ծըռուագիրը կազմված ե այն նախագծի հիման վրա, վոր լույս ե տեսել «Под знаменем марксизма» 1937թվի 6 և «Высшая школа» 1937թվի 8—9 համարներում, հաշվի առնելով, նախագծի վերաբերյալ յեղած մի քանի դիտողություններն ու արձականությը։

Դիալեկտիկական յեզ պատմական մատերիալիզմի դասընթացի պլան

Թեմանեւ րի համար- ները	ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵ- ՄԱՆԵՐԸ	ԺԱՄԵՐԻ ՔԱՂԱԿԸ
		Դասախոս խմբային սութ, հա- պարագմ, մար համար

ՀԱՏՎԱԾ 1-ին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմա 1-ին Մարքոսիզմի վելիսոսփայությունը, նը-
րա առարկան և ինդիբրները . . .

2

ՀԱՏՎԱԾ 2-րդ

ՓԻԼԻՍՈՓԱՅՑՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԳԱԾ-
ՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Թեմա 2-րդ ա) Մատերիալիզմի և իդեալիզմի պայ-
քարի հիմնական ետապները անտիկ աշ-
խարհի վելիսոսփայության մեջ.
բ) Ֆեոդալական հասարակության վել-
իսոսփայությունը. . .

6

Թեմա 3-րդ Մատերիալիզմի և իդեալ-
իզմի պայքարի հիմնական
ետապները բուրժուական
կլասիկ վելիսոսփայութ. մեջ

1. ա) Վերածնության շրջանի վելիսոս-
փայությունը.

բ) Ֆ. Բեկոն, Թ. Հոբբս . . .

2

2. Բ. Ֆելարտ, Բ. Սպինոզա, Գ. Լայբնից

2

3. Զ. Լոկի, Զ. Բերկլի, Դ. Յում

2

4. Ֆրանսիական լուսավորիչները. 18-րդ
դարի ֆրանսիական մատերիալիստ-
ները՝ Ժ. Լամետարի, Դ. Դիբլո, Պ.

2

5. Գերմանական կլասիկ իդեալիզմ

2

ա) Օ. Կունտ . . .

—

բ) Գ. Հեղել . . .

2

լ. Ֆրանսիական մատերիալիզմը . . .

2

Թեմա 4-րդ Առյօնաբախի մատերիալիզմը . . .

2

5. Համականերության մատերիալիզմը . . .

—

6. Համականերության մատերիալիզմը . . .

—

7. Համականերության մատերիալիզմը . . .

—

Թեմա 5-ըդ	Պրոլետարիատի փիլիսոփայության ծագումն ու զարգացումը, կ. Մարքս, Ֆ. Ենգելս	2	
Թեմա 6-ըդ	Փիլիսոփայության զարգացումը Ռուսաստանում 18—19-րդ դարերում	6	
		30	
	ՀԱՏՎԱԾ 3-ՐԴ		
	ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐԻԱԼԻ ՀԻՉՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ		
Թեմա 7-ըդ	Մատերիալիստական դիալեկտիկան վրապես գիտություն	2	
Թեմա 8-ըդ	Դիալեկտիկական մատերիալիզմը մատերիայի, շարժման, տարածության և ժամանակի մասին	2	
Թեմա 9-ըդ	Մարքս-լենինյան աբտացուման թեորիան	4	2
Թեմա 10-ըդ	Մատերիալիստական դիալեկտիկայի հիմնական որենքները		
	1. Հակաղորությունների միանության և պայքարի որենք	2	2
	2. Քանակից վրապես և փորակից քանակին անցման որենք	2	4
	3. Բացասաման բացասաւմի որենքը եյություն և յերկույթի Զեվ և բովանդակություն	2	
Թեմա 11-ըդ		3	
Թեմա 12-ըդ	Պատճառականություն և փոխազդեցություն. պատճառականություն և անհրաժեշտություն, Հնարավորություն և իրականություն	4	2
Թեմա 13-ըդ	Դիալեկտիկո-մատերիալիստական տրամաբանությունը և ձեւական տրամանության քննադատությունը	2	2
		20	12
	ՀԱՏՎԱԾ 4-ՐԴ		
	ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՍԵՐԻԱԼԻՀԻՉՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ		
Թեմա 14-ըդ	Պատմության մատերիալիստական ըմբռնումը և բուրժուական հասարակական ուսմունքների քննադատությունը	4	2

Թեմա 15-ըդ	Հասարակական - տնտեսական գործադրություններ, արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ . . .	4	2
Թեմա 16-ըդ	Դասակարգերի ծագումը և դասակարգային ուժեր . . .	4	4
Թեմա 17-ըդ	Ուսմունք պետության և հեղափոխության մասին, Ուսմունք պրոլետարիատի գիտատուրայի մասին . . .	4	2
Թեմա 18-ըդ	Հիմք և վերաշնչնքեր, Հասարակական գիտակցության ձևերը . . .	2	-
Թեմա 19-ըդ	Ուսմունք կուլտուրայի և կուլտուրական հեղափոխության մասին . . .	2	-
Թեմա 20-ըդ	Կրոնի ծագումը Մարքսիզմ-լենինիզմի պայքառը կրոնի դեմ . . .	2	-
Թեմա 21-ըդ	Բարրյագիտության . . .	2	-
Թեմա 22-ըդ	Սոցիալիզմ և կոմունիզմ . . .	2	2
ԼԱՏՎԱԾ 5-ըդ		26	12
ՄԱՐՔԻՍԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՑԱՆ ԱՍԱԼԻԲՆՑԱՆ ԵՏԱՊԼԻ			
Թեմա 23-ըդ	Խարբուզների սուբյեկտիվ սոցիոլոգիայի, լեզու մարքուզմի, եկոնոմիզմի և մենշևիզմի թեօրեափակական հիմունքների ջախչախումը լենինի կողմէց . . .	4	2
Թեմա 24-ըդ	Լենինի պայքարը մախիզմի դեմ . . .	2	-
Թեմա 25-ըդ	Լենինի և Ստալինի պայքարը տրոցիկոսների և բուխարենականների, մենշևիզմի իրեալիստների և մեխանիստների ռեակցիոն փիլիսոփայական «թերթաների» դեմ . . .	4	2
Թեմա 26-ըդ	Դիալեկտիկական մատերիալիզմի զարգումը քննիչը Ստալինի կողմից . . .	4	2
14		6	
80			80

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԱՍԸՆ-
ԹԱՑԻ

Համաձայն 1-ին. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեժա 1. ՄԱՐՔՍԻ ԶԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԱՌԱՐ-
ԿԱՆ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարքսիզմի յերեք աղբյուրները և յերեք բաղկացուցիչ
մասերը: Գլխավորը մարքսիզմի մեջ: Մատերիալստական դիա-
լեկտիկան վորպես մարքսիզմ-լենինիզմի փիլիսոփայական դի-
տություն: Մատերիալիստական դիալեկտիկան «մարքսիզմի ար-
մատական թեորետիկական հիմքն ե» (Լենին), «ամբողջական
աշխարհայցք, փիլիսոփայական սիստեմ, վորից տրամաբա-
նորեն բղխում ե Մարքսի պրոլետարական սոցիալիզմը» (Մատալին):
Մարքս-լենինյան փիլիսոփայությունը վորպես ամենաառաջավոր,
ամենահեղափոխական դասակարգի դադարաբախոսություն:

Ենդեւսը փիլիսոփայության հիմնական հարցի մասին: Փի-
լիսոփայության հիմնական հարցի յերկու կողմերը, մտաե-
րիայի թե հոգու առաջնության պրոբլեմը և աշխարհի ճանաչելի-
ության պրոբլեմը: Փիլիսոփայության հիմնական հարցի լուծու-
մը մատերիալիզմի և իդեալիզմի կողմից: Իդեալիզմի և մատերի-
ալիզմի դասակարգային և իմացարանական արմատները: Ենդեւ-
սը, Լենինը և Մտալինը փիլիսոփայության հիմնական հարցի
դուալիստական լուծման մասին: Մատերիալիզմի և իդեալիզմի
պայքարը փիլիսոփայության պատմության մեջ և այդ պայքա-
րի սոցիալական արմատները: Թեորիայի և պրակտիկայի միաս-
նությունը մարքսիզմ-լենինիզմի փիլիսոփայության մեջ: Մարք-
սիզմ-լենինիզմը փիլիսոփայության դասակարգայնության և
կուսակցականության մասին: Մարքսիզմ-լենինիզմի պայքարը
բուրժուական որյեկտիվիզմի և զիտության վերդասակարգայ-
նության «թեորիայի» գեմ: Մարքսի փիլիսոփայական մատերի-
ալիզմը տվեց մարդկությանը, իսկ հատկապես բանվոր դասա-
կարգին «հմացության մեջ զենք» (Լենին):

Պայքար մարքսիստական փիլիսոփայությունը վորպես գի-

մության մեխանիստների կողմից վերացման և մարքսիզմի վիւլմոփայության առարկայի մենշևիկող-իդեալիստական աղավաղան գմբ:

Դիալեկտիկական մատերիալիզմի դարձացումը լենինի և Ստալինի կողմից՝ բուրժուատկան, ռեվլյուսնիստական թեորիաների գեմ մղած պայքարում: Լենինը և Ստալինը մարքսիստական վիվսոփայության մարտական խնդիրների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆ. ԵՆԳԵԼԸ.—Լյուդվիկ Ֆոյերբախ, գլուխ 2-րդ (հջ 18—22);
Վ. Ի. ԼԵՆԻՆ.—Դիալեկտիկա (բրոյառուր), հջ 7—8, 34—38 (իւղալիզմի իմացաբանական արժաների մասին);
Վ. Ի. ԼԵՆԻՆ.—Մարքս-Ենգելս-մարքսիզմ (հոգվածների ժողովածու), հոդվածներ՝ հոդվածներ,

Մարքսիզմի յերեք աղբյուրները և յերեք բաղկացուցիչ մասերը, Կարլ Մարքս (ամբողջը),

Կուսակցությունը վիլխուսոփայության մեջ կամ՝ լենինի հաստոք 13-րդ, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» հջ 384—394:

Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին*),
Ի. ՍՏԱԼԻՆ.—Լենինիզմի հարցերը, լենինիզմի հիմունքների մասին, գլուխ 3-րդ—թեորիա:

Լ. ԲԵՐԻԱԼ.—Ենգելվկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը:

Հ Յ Ն Կ Ա Խ Ա Ր Վ Ե Ր Ա Ր Վ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ա Մ Ա Կ Ա Ն Ե Տ Ա Պ Ն Ե Ր Ը

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Թեմա 2-րդ. ա) ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ և ԻԴԵԱԼԻԶՄԻ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵջ ՓՈՅՈՒԹՅԱՆ ՄԵջ

Մարքսիզմ-լենինիզմը վիլխուսոփայության պատմության ուժումնասիրության խնդիրների մասին:

*) Այն հոդվածները, վորոնք նշված են լենինի՝ Մարքս-Ենգելս-մարքսիզմ գործույկեց, վերջինիս բացակայության դեպքում պետք է վերցնել՝ լեռն-Ստալին, Ընտիր յերկեր յերկու հատորով, կամ՝ լենին, Ընտիր յերկեր յերկու հատորով:

Լենինի և Ստալինի արդ աշխատությունները (կարճ՝ Յերկատորյակ) բոլոր գեպերում պետք է ուսենալ, նրանք ծրագրում հաճախ են նշվում՝ ՄԱՆՈԹ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄ, ԽՄԲ.

Անտիկ աշխարհի ժամերիալիզմի առաջացման սոցիալ-տըն-
աեսական նախադրյաները 6-րդ դարում մեր թվարկությունից
առաջ: Մարքսը հունական կուլտուրայի՝ վորպես «մարդկու-
թյան նորմալ մասնկության» մասին: Առաջին հունական ժամե-
րիալիստները (Միլիթական դպրոց), Թալես (624—548 թ. մ. թ.
ա.): Նրա ուսմունքը ջրի, վորպես սկզբնանյութի մասին:
Անտքսիմանգը (611—547 թ. թ. մ. թ. ա.):

Նրա ուսմունքը «ապեյրոնի» և հակադրությունների մէջոցով աշխարհի առաջացման մասին: Անտքսիմեն (585—528 թ. թ.
մ. թ. ա.): Նրա ուսմունքը ողի, վորպես սկզբնանյութի և տի-
յեղերքի մասին: Միլիթյիների ժամերիալիզմի արերացյալների և նայիվ բնույթը:

Պյութագորը (571—497 թ. թ. մ. թ. ա.) վորպես ոհակ-
ցիոն արխատոկրատիայի գաղափարախոս: Նրա ուսմունքը թվի՝
վորպես աշխարհի հիմքի մասին: Լենինը պյութագորեական իդե-
ալիզմի իմացաբանական արմանների և պյութագորցիների «գի-
տական մտածողության սավերի» մասին:

Հերակլիտ (540—480 թ. թ. մ. թ. ա.) Հերակլիտի սոցի-
ալ-քաղաքական հայցքները: Նրա Ֆիդիկայի ժամերիալիստա-
կան հիմքը: Կրակը վորպես «սկզբնանյութ»: Հերակլիտի դիակեկ-
տիկան և նրա նայիվ բնույթը:

Ելեաթներ, նրանց պայքարը Հերակլիտի հետեւների դեմ:
Պարմենիդ (ծն. մոտ 540 թ. մ. թ. ա.), նրա մետաֆիզիկական ուսմունքը իրական գոյի և թվացող գոյի մասին: Զենոնի արգու-
մենտները բազմակերպության և շարժման գիմ: Լենինը Զենոնի
արգումենտների մասին:

Դեմոկրիտ (460—370 թ. թ. մ. թ. ա.) Դեմոկրիտը վորպես
գաղափարախոս ստրկատիրական դիմոկրատիայի, «հարուստ ար-
դյունաբերողների և վաճառականների նոր գասակարգի» (Են-
դել): Դեմոկրիտի ատոմական ժամերիալիզմը: Ուսմունքը
ատոմների շարժման և աշխարհների գոյացման մասին: Դեմոկրի-
տի իմացաբանությունը: Դեմոկրիտը կրոնի մասին: Եթիկա-
կան հայցքները: Մարքսիզմ-լինիզմի կլասիկները Դեմոկրի-
տի փիլիսոփայության մասին:

Պլատոնը (427—347 թ. թ. մ. թ. ա.) վորպես գաղափա-
րախոս Աթենքի ստրկատիրական արխատոկրատիայի: Պլատոնը

վորպես իդեալիզմի սիստեմավորող, Նրա ուսմունքը իդեաների, զգայական առարկաների և մտաբերիայի մասին:

Աստված վորպես աշխարհի արարիչ, Պլատոնի իմացաբանությունը, Պլատոնի ուսմունքը պետության մասին, Պլատոնյան «կոմունիզմի» ուստափական և ոհակցիոն բնույթը, Պլատոնիզմի պատմական նշանակությունը, Նրա ազդեցությունը փիլիսոփայության հետագա զարգացման վրա և գերը և ատերիալիզմի գեմ մղված պայքարում:

Արևոտուել (384—322 թ. թ. մ. թ. ա.), Նրա ուսմունքը վորպես արտացոլում հունական պոլիսների անկման դարձանի հակասությունների, Անտիկ աշխարհի «արտաքին ծաղկման բարձրագույն աստիճան» (Մարքս) Ալեքսանդր Մակեդոնացու գարաջրջանում, Արիստոտելը վորպես «միծագույն մըտածող» (Մարքս), «Հին աշխարհի Հեղեկը» (Ենդելս), Անտիկ բնափիլիսոփայության ընդհանրացումը և հախորդ փիլիսոփայուական դպրոցների քննադատությունը:

Իդեաների պլատոնյան ուսմունքի քննադատությունը, Արիստոտելի տատանումները մատերիալիզմի և էդեալիզմի, գիտեկտիկայի և մետաֆիլիկայի միջև, Արիստոտելի իդեալիստական ուսմունքը բովանդակության հանգեց ձեր առողջության մասին, Իմացաբանությունը, Մարքսը, Ենդելսը, Լենինը Արիստոտելի դիալեկտիկայի մասին, Արիստոտելի փիզիկան, Ուսումունք հասարակության և պետության մասին, Արիստոտելի եպիկրափայության պատմության մեջ:

Եպիկրափ (342—270 թ. թ. մ. թ. ա.), Նրա փիլիսոփայության մատերիալիստական բնույթը, Եպիկրափի իմացաբանությունը: Ատոմիսերի շարժման վերաբերյալ Դեմոկրիտի ուսմունքը վերամշակումը Եպիկրափի կողմից, Կրոնի և հոգու անմահության ուսմունքի քննադատությունը:

Լուկրեցիոս (մոտ 99—55 թ. թ. մ. թ. ա.), Նրա փիլիսոփայության մատերիալիստական-աթեիստական բնույթը Լուկրեցիոսի «Էրերի բնության մասին» պոեմը:

բ) Ֆե՛ռո՛յԱ.Ա.ԿԱՆ ՀԱՍՍՐԱԿՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ցելքրապայի ֆեռդալացման պրոցեսը և ֆեռդալական արտադրայեղանակի հիմնական գծերը, Գիտությունն ու փիլիսոփայությունը վաղ ֆեռդալիզմի պայմաններում, Ցելքրապային վորք

պես ֆեռդալիզմի հիմական հենարան։ Փիլիսոփայությունը՝ աստ-
վածաբանության աղախին (Ենգելս)։ Պայքար ու ալիզմի և նո-
մինալիզմի միջև։ Նոմինալիզմը վորպես սմատերիալիզմի առա-
ջին արտահայտություն» (Մարքս)։ Արարական և հրեական
դիտության ու փիլիսոփայության աղղեցությունը յեվրոպական
փիլիսոփայության և գիտության զարգացման վրա։ Սխոլաս-
տիկայի ծաղկումը Թոմա Ալեքսանդրի և իմացության մասին։ Դուն և
Սկոտ (1265—1308)։ Մարքսը և Ենգելսը մատերիայի մտա-
ծունակության դունսկուստյան հարցադրման մասին։

Տնտեսական և կուլտուրական զարգացման պրոցեսը և սխո-
լաստիկայի քայլքայման սկիզբը։

Թոջեր Բեկոն (1214—1294)։ Նրա կոչը գեղի ուալ գի-
տություն և սխոլաստիկայի քննադատությունը։ Նոմինալիզմի
ուժեղացումը 14—15-րդ դարերում։

Վիլհելմ Ոկկոն (1270—1347)։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(«ա» և «բ» հատվածների համար)

Կ. Մարքս.—Քաղաքանակառության քննադատության շուրջը, եջ՝
56—58 (Հունական կուլտուրայի մասին)։

В. И. Ленин.—Философские тетради, стр. 255—322, 331—337։

Ֆ. ԵՆԳԵԼՍ.—Բնության գիտեկատիկա, եջ՝ 162—166, 113 (տես
նաև անվանացանկը՝ Դիմոկրիտ, Եպիկուր, Արիատուկել)։

Ֆ. ԵՆԳԵԼՍ.—Անտի-Դյուրինգ, եջ՝ 24, 294—295։

Վ. Ի. Լենին.—Դիալեկտիկա, եջ՝ 34—38։

✓ Г. Арним. История античной Философии изд. Бодановой. 1910
К. Маркс, Ф. Энгельс. Соч. т. 3, стр. 157 (О Дунсе Скотте)
կամ В. И. Ленин, философские тетради, стр. 46.

Թեմա 3-րդ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ ՑԵՎ ԻԴԵԱԼԻԶՄԻ ՊԱՅՔԱՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԵՏԱՂԵՐԸ ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ԿԼԱՍԻԿ ՓԻԼԻՍՈ-
ՓԱՅՔՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. ա) Գերածնության դարաշրջանի Փիլի-
սոփայությունը.

Սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունները
Յեվրոպայում 15—16-րդ դարերում գիտական մեծ դյուտերը, Գիտության

և արվեստի ծաղկումը: Գիտական աշխարհայացքի զարգացումը և յեկեղեցու հոգևոր դիկտատուրայի հիմքերի խորտակումը: Ենդելսը կոպէ ընիկության մասին: Զ. Բրունոյի (1548—1600) ուսմունքը հեղափոխական նշանակության մասին: Զ. Բրունոյի (1548—1600) կոսմոլոգիական (տիյեղերաբանական) ուսմունքը վորպես կոպերնիկոսի հայտնագործումների ընդհանրացում և հետագա զարգացում: Բրունոյի ուսմունքը աստծու և բնության, սկզբի և պատճառի, ձեր և մատերիայի, տիյեղերքի անվերջության ու միասնության մասին: Բրունոյի պայքարը յեկեղեցու դեմ հանուն աղատ հետազոտության իրավունքի: Բրունոյի նշանակությունը ֆիլիսոփաայության պատմության մեջ: Թ. Կամպանելլայի սոցիալական ուսուպիան (1568—1639), Գալիլեյը (1564—1641) վորպես նոր ժամանակների մեխանիստական բնագիտության հիմնադիր: Նրա պայքարը նոր աշխարհասիստեմի համար: Գալիլեյի գատավարությունը (1633):

բ) Նախնական կապիտալիստական կուտակման դարաշրջանը: Մարքսը և ենգելմար 17-րդ դարի անգլիական ֆիլիսոփաայության մասին:

Յ. Բեկոնը (1561—1626) վորպես անգլիական մատերիալիզմի և առհասարակ նորագույն ժամանակների «ֆորձնական գիտությունների» (Մարքս) իրականնախանայր: Գիտության սիստեմը և խնդիրները ըստ Բեկոնի: Բեկոնի մատերիալիզմի մետաֆիզիկական բնույթը: Սխոլաստիկայի քննադատությունը Բեկոնի կողմից: Բեկոնի Ուսմունքը իդոլների, պատճառականության, ձեերի և շարժման վորպես ժամանակայի բնածին հատկությանը (Մարքս) մասին: Եմպիրիզմը Բեկոնի իմացարանության մեջ: Բեկոնի ինպուլցիան:

Թ. Հոբեմը (1588—1679) վորպես Բեկոնի մատերիալիզմի սիստեմավորող, վոր գարձեց այն մեխանիստական մատերիալիզմ: Փիլիսոփաայության խնդիրներն ու առարկան ըստ Հոբեսի: «Բնական հատարակության» («բոլորի պայքարը բոլորի դեմ») և պետության դաշինքային առաջացման («Լեվիաֆան») Հոբեսի ուսմունքի սոցիալական իմաստը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կ. Մարկոս Փ. Էնգելս.—Соч. т. 3-ий, стр. 154, 157—158.

Дж. Бруно.—О причине, начале и едином, 1934 (դասականութիւնը և ցուցմունքով):

Ф. Кампанелла.—Город Солнца, „Академия“ 1934 г.

Ф. Бекон.—Новый органон (դասախոսի ցուցմունքով):

Т. Гоббс.—Левиафан (դասախոսի ցուցմունքով):

2. Ո. Դեկարտ. Բ. Սպինոզա. Գ. Լայբնից.

Ո. Դեկарտ (1596—1690): Թրանսիֆան 17-րդ դարի առաջին կիսում: 17-րդ դարի մետաֆիզիկան և նրա կապը գիտության հետ: Թրանսիֆայի դասակարգային պայքարի հակասությունների անդրադարձումը Դեկարտի փիլիսոփայության մեջ: Կառկածանքը վորպիս Դեկարտի սիստեմի յելակետ: Դեկարտի՝ «յես մտածում եմ, հետեւաբար յես գոյություն ունեմ» թեզը և նրա քննադատությունը: Դեկարտի գուալիզմը փիլիսոփայության մեջ: Դեկարտի ֆիզիկան և նրա մեխանիստական-մատերիալիստական բնույթը: Ուսմունք կենդանի մեքենաների մասին: Դեկարտի մետաֆիզիկան: Ուսմունքը բնածին իդեաների մասին: Դեկարտի ուսցիոնալիզմը: Դիալեկտիկայի տարրերը Դեկարտի կոսմոգոնիայի և մաթեմատիկայի մեջ ու նրանց գնահատումը ենգելսի կողմից: Դեկարտի փիլիսոփայության մենշեփիկող իդեալիստական և մեխանիստական գնահատման քննադատությունը:

Բ. Սպինոզա (1632—1677): Հոլանդիան 17-րդ դարում՝ Յեվրոպայի առաջավոր կապիտալիստական յերկիր: Դիտության և արքիստի ծաղկումը: Սպինոզայի մատերիալիստական մոնիզմը: Սպինոզայի ուսմունքը միասնական սուբստանցի և նրա ատրիբուտների մասին: Սպինոզայի սուբստանցի բնութագրումը Մարքսի կողմից, ժամանակն ու շարժումը Սպինոզայի ուսմունքի մեջ: Ռացիոնալիստական իմացաբանությունը: Ուսմունքը ազատության մասին: Այդ ուսմունքի հայեցողական բնույթը: Աթերզմը: Սպինոզայի ուսմունքի մեխանիստական և մենշեփիկող իդեալիստական գնահատման քննադատությունը: Մարքսիզմի վորպիս և պինողիզմի ալլատեսակության» Պիեխանովի դըրույթի քննադատությունը: Սպինոզայի մատերիալիզմի գնահատումը Մարքսի և ենգելսի կողմից:

Գ. Լայբնից (1646—1716): 17-րդ դարի գերմանական յերկրների սոցիալ-տնտեսական բնութագրումը: Լայբնիցը վրա-

պես Գերմանիայի բուրժուական զարգացման գաղափարախռոս նրա ֆեոդալական կոտորակման պայմաններում: Գոյքի և կեմենտուների (մոնաշների) իրեալիստական ուսմունքը: Մոնաշների աստիճանները: Մոնաղը վորպես սուբստանց: Ուժը վորպես մոնագի եյություն: Լայբնիցի սացիոնալիստական իմացաբանությունը: Նրա ուսմունքը աստվածության մասին: Դիալեկտիկայի տարրերը Լայբնիցի ուսմունքի մեջ: Լայբնիցը վորպես 17-րդ դարի սացիոնալիզմի վերջին ներկայացուցիչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կ. Մարքս Փ. Էնգելս.— Սоч. տ. 3-ի. стр. 154—168.
Ֆ. Ենգելս,— Բնության դիալեկտիկա, հջ 35—38, 65—67, 134—
146 (տես նաև անվանացանկ՝ Դիկարտ, Սպինոզա,
Լայբնից):

В. И. Ленин.— Философские тетради, стр. 77—86.
(տես նաև անվանացանկ՝ Դիկարտ, Սպինոզա,
Լայբնից):

Декарт.— Правила для руководства ума. Соц.-эк. изд. 1936 г.

Спиноза.— Этика. ч. 1-ая, (գասախոսի ցուցմունքով).

Лейбниц.— Новые опыты о человеческом разуме. Соц. Экгиз. 1936 г. (գասախոսի ցուցմունքով):

3. Զ. Լոկ Զ. Բերկլի Դ. Յունք.

Զ. Լոկ (1632—1704): Լոկի վիլիսոփայությունը և Նյուտոնի (1642—1727) մեխանիստական բնափիլիսոփայությունը: Լոկի մեխանիստական ուսմունքը առաջնային և յերկրորդային վորակների մասին: Զգայական աշխարհից իմացաբանությունների և իդեաների առաջացման սկզբունքի մշակումը Լոկի կողմից:

Բնածին իդեաների թեորիայի քննադատությունը Լոկի կողմից: Լոկի ուսմունքը վորպես վիլիսոփայության հիմագաղաքաբան յերկու ուղղությունների հիմք:

Զ. Բերկլի (1684—1753): Դասակարգերի պայքարն Անգ-

լիայում անդլիական յերկրորդ հեղափոխությունից հետո (1688), Բերկիի պայքարը մատերիալիզմի դեմ կրոնի պաշտպանման համար: Բերկիի փիլիսոփայության ռեակցիոն ընույթը իմացաբանությունը: Բերկիի իդեալիստական սենսուալիզմը և նույնալիզմը:

Բերկիի սուբյեկտիվ իդեալիզմը («աշխարհայցք առանց աշխարհի»): Մարքսի, Ենգելսի, Լենինի պայքարը բերկիականության դեմ:

Դ. Յում (1711—1776): Յումի ուսմունքը պատճառականության մասին և այդ ուսմունքի քննութառությունը Ենգելսի կողմից: Իմացաբանությունը: Յումի ֆինումենալիզմը և ազնուածիցիզմը: Միակողմանի եմպիրիզմի վերասերումը սկեպտիցիզմի և գրաս սոցիալական հիմքերը: Մարքսի, Ենգելսի, Լենինի պայքարը յումիզմի դեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆ. Ենգելս.—Բնության դիալեկտիկա (տես անվանացանկը՝ Լոկի, Յում):

Ֆ. Ենգելս.—Լուգվիկ Ֆոյերբախ, հջ 20—21:

Վ. Ի. Լենին.—Համար 13-րդ, (Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ), հջ 19—39, 177, 184, 118—119, 140—142:

4. Ֆրանուիական լուսավորիչներ. XVIII դ. Փրանուիական մատերիալիստներ. Ժ. Լամետորի (1709—1751). Դ. Դիքրո (1713—1784). Պ. Հոլբախ (1723—1789). Կ. Հելվեցիուս (1715—1771).

II 18-րդ դարի կեսերի Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական ըընութագրումը: Բնական գիտությունների վիճակը: 18-րդ դարի Ֆրանսիական լուսավորչական փիլիսոփայությունը: Ֆ. Վոլտեր (1694—1778) և նրա ուցինալիստական գիրքը: Յեկիզիցու և կրոնի քննադատությունը Վոլտերի կողմից: Ժան Ժուլ Ռուսո (1712—1778) և նրա սենսուալիստական գիրքը: Ռուսոյի ուսմունքը անհավասարության ծագման մասին: Ենդելսը Ռուսոյի հասարակական հայցքների մասին:

18-րդ դարի Ֆրանսիական մատերիալիզմը փրակի հեղա-

ծը. Գիալ և պատմ. մատեր.



փոխական բուրժուազիայի գաղափարախոսություն։ ՖրանսիաՅի կանաքան մատերիալիստների պայքարը 17-րդ դարի մետաֆիզիկայի դեմ։ Մարքսը ֆրանսիական մատերիալիզմի յիրկու ուղղությունների մասին։

Ֆրանսիական մատերիալիստների իմացաբառնությունը։ Մատերիալիստական սենսուալիզմը։ Բանականության գերը իմացության պլրոցեսում։ Աշխարհի ճանաչելիության ուսմունքը։ Պլեիանովի և Դերորինի սխալների քննադատությունը, վորոնք ֆրանսիական մատերիալիստներին դասում ենին ազնոստիկների շարքը։ Ուսմունք մատերիայի, տարածության և ժամանակի մասին։ Ուսմունք աշխարհի և որդանական եյությունների առաջացման մասին։ Եփոլյուցիոն թեորիայի սաղմերը կամետարիյի և Դիզորյի հայացքներում։ Ֆրանսիական մատերիալիստների սոցիալ-պատմական հայացքները, Լենինը 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիստների աթեմպմի մասին։ Ֆրանսիական մատերիալիստների հասարակական ուսմունքի իդեալիստական ընույթը։ Մարքսը, Ենգելսը, և Լենինը 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիստների փիլիսոփայության սահմանափակության մասին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Կ. Մարքս և Ֆ. Էնգելս.—Соч. т. 3-ий, стр. 158—162
(կամ՝ Ленин, Философские тетради, стр. 44—49)
Ֆ. Ենգելս.—Անտի-Դյուրինգ, եջ՝ 19—20, 180—182.
Ֆ. Ենգելս.—Լյուդվիկ Ֆոյերբախ, գլուխ 2-րդ:
Վ. Ի. Լենին.—Հատոր 13-րդ, եջ՝ 35—39, 139—140.
Վ. Ի. Լենին.—Մարքս-Ենգելս-մարքսիզմ:

Հ ո գ վ ա ծ ն ե ր՝

Մարքսիզմի յիրեք աղբյուրները և յիրեք բաղկացուցիչ մասերը։

Կարլ Մարքս, հատված՝ «Փիլիսոփայական մատերիալիզմ»։
Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին։
Հելվետիուսուս.—Բնության սխուեմի իսկական իմաստը,

Г. В. Плеханов.—Соч. т. 8-ой, Очерки по истории материализма.

Գ. Վ. Պէտական վ.—Յերկեր, հատ, 3-րդ, գլ, 1-ին, 18-րդ դարի
Քրանսիական մատերիալիզմը

5. Գերմանական կլասիկ իդեալիզմը

Գերմանական կլասիկ փիլիսոփայության պատմական դերը
ըստ Մարքսի, Ենգելսի, Լենինի:

18-րդ դարի յերկրորդ կեսի Գերմանիան և Պրուսիան
ու Նրանց սոցիալ-տնտեսական բնութագրումը: Լայբնից-վոլֆյան
մետաֆիզիկան և բնական գիտությունների վիճակը Գերմանիա-
յում 18-րդ դարի կիսում:

ա) Ե. Կանտ (1724—1804) վորպես 18-րդ դարի գերմա-
նական բուրժուազիայի գաղափարախոռու Մարքսը և Ենգելսը
կանոնի փիլիսոփայության վորպես «Փրանսիական հեղափոխու-
թյան գերմանական թեորիայի» մասին: Կանոնի գիտական և փի-
լիսոփայական զարգացման հիմնական ետապները: Կանոնը վոր-
պես գերմանական կլասիկ փիլիսոփայության նախահայրը: Կան-
ոնի զարգացման «մինչըլլիտիկական» շրջանը և նրա բնագի-
տական աշխատությունները: Կանոնի մեխանիստական կոսմոգո-
նիան և զարգացման իդեան: Կանոնի փիլիսոփայական զարգաց-
ման «կրիտիկական» շրջանը: Եմպերիզմի, ուսցիոնալիզմի և
սկեպտիզմի քննազատությունը կանոնի կողմէց: Դիտության
լնդհանրականությունը և անհրաժեշտությունը ապրիորիզմով հիմ-
նավորելու փորձը: Կանոնի զուալիզմը փիլիսոփայության հիմնա-
կան հարցի լուծման մեջ: Փորձի կանոնյան ըմբռնումը: Կանոնի
ազնոստիցիզմը («ինքնին իրերի» անհմանալիությունը) և նրա
տարրերությունը Յումի ազնոստիցիզմից: Կանոնի ուսմունքը
բանականության մասին: Անտինոմիաների կանոնյան ուսմունքի
նշանակությունը փիլիսոփայության պատմության մեջ:

Կանոնի ուսմունքը բարոյականության մասին: Կատեղորիկ
հրամայականը (իմպերատրիվը): Կանոնի զուալիզմը ազտոսության
և անհրաժեշտության պրոբլեմի լուծման մեջ:

Կանոնի փիլիսոփայության պատմական նշանակությունը և
նրա ազգեցությունը բուրժուական փիլիսոփայության վրա:
Կանոնի քննազատությունը աշխատ և ձարբեց: Դիտության կլա-
սիկ իդեալիզմի հետագա զարգացումը: Ֆիլիոնիի սուբյեկտիվ
եղեալիստական փիլիսոփայությունը: Շելլինը, նույնության փի-
լիսոփայությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ֆ. Ենգելս. — Լյուդվիկ Ֆոյերբախ, գլուխ 2-րդ
 Ձ. Ենգելս. — Անտի-Դյուրինդ, հջ՝ 72—74;
 Վ. Ի. Լենին. — Հատոր 13-րդ, գլուխ 4-րդ, պարագրաֆ 1 և 7,
 գլուխ 3-րդ, պարագրաֆ 1 և 2, եջ՝ 140—142;
 В. И. Ленин. — Философские тетради, стр. 93, 100, 128—
 129, 132, 172—173, 180—196, 198.

Բ) Հեղել (1770—1831): Հեղելի փիլիսոփայությունը վորապես գերմանական կրասիկ փիլիսոփայության ավարտումը: Հեղելի ուսմունքի պրոգրեսիվ և ռեակցիոն տենգենցինը վորպես 19-րդ դարի գերմանական բուրժուազիայի գոյավիճակի անդրադարձում:

Հեղելի որյեկտիվ իդեալիզմը: Բացարձակ իդեան վորպես իրականության արարիչ: Բացարձակ իդեալի զարգացումը: Հեղելի սիստեմը: արամարանությունը, ընության փիլիսոփայությունը և վոգու փիլիսոփայությունը վորպես բացարձակ իդեալի զարգացման աստիճաններ: Հեղելի իդեալիզմի քննադատությունը Մարքսի կողմէց: Պատմականը և արամարանականը Հեղելի փիլիսոփայության մեջ: Դիալեկտիկայի, արամարանության և իմացարանության իդեալիստական նույնությունը Հեղելի փիլիսոփայության մեջ:

Ուսմունք դիալեկտիկական հակասությունների մասին Հեղելի արամարանության մեջ: Լեսինը Հեղելի «Տրամարանության պլանի մասին»: Ձևական արամարանության քննադատությունը Հեղելի կողմէց: Լենինը կանոնի փիլիսոփայության հեղելյան քննադատության մասին: Մենչեւիկող իդեալիստների քննադատությունը, վորոնք Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի մատերիալիստական դիալեկտիկան նույնացնում էլին Հեղելի իդեալիստական դիալեկտիկայի հետ: Մելիւնիստների քննադատությունը, վորոնք մերժում ելին Հեղելի դիալեկտիկան: Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը մարքսիզմի հեղելյան դիալեկտիկայի հարաբերության մասին: Հեղելի բնագիտությունը, վորոնք մերժում ելին Հեղելի դիալեկտիկան: Մարքսը, Ենգելսը, Ստալինը մարքսիզմի և հեղելյան դիալեկտիկայի հարաբերության մասին: Հեղելի բնագիտության հայացքների մետաֆիլիկական հայացքների ուսմունքը և հասարակության և գովագիտաբախության ձևերի (արվեստի, կրոնի և փիլիսոփայության) մասին: Հեղելի ուսմունքը իրականի բանականի մասին ու նրա

Եյությունը: Պրուսական պետականության ռեակցիոն ձևերի
արդարացումը Հեղելի կողմից: Հեղելի պատմական իշխալիզմը:
Սխոտեաթի և մեթոդի հակասությունը Հեղելի փիլիսոփայության
մեջ: Ինչինը Հեղելի պատմութիւնության մասին: Թաշխու-
տական բուրժուազիայի կողմից հեղելյան փիլիսոփայության
մեռած և ռեակցիոն կողմերի ուղարգործումը Փաշխատական տեսու-
րի արդարացման համար: Հեղելի տեղը փիլիսոփայության
պատմության մեջ, նրա մարքութինյան արժեքավորումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ֆ. Ենդելս. — Եյուդվիկ Ֆոյեբբախ, գլուխ 1-ին:
Ֆ. Ենդելս. — Անտի-Դյուքինգ, եջ՝ 28—29, 12—14, 23:
Կ. Մարքս. — Կապիտալ, հատոր 1-ին, 2-րդ հրատարակության
վերջաբանը:
Կ. Մարքս և Ֆ. Ենդելս. — Նամակներ (տես անվանացանկը) ✓
Հեղել:
Վ. Ի. Լենին. — Մարքս-Ենդելս-մարքսիզմ.

Հ Ա Գ Վ Ա Տ Ա Բ Ե Ր

Կարլ Մարքս, «Դիալեկտիկա» հատվածը:

Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին:

Վ. Ի. Լենին. — Դիալեկտիկա, եջ՝ 10—16:

Վ. И. Ленин.—Философские тетради, (զասանոսի ցուց-
մունքով):

Լ. Բերիա. — Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ✓
պատմության հարցի շուրջը, գլուխ 2-րդ:

Գեգել. — Соч. т. 1-ый, (введение), т. 9-ый, (введение).

Գ. Վ. Պլեխով. — Կատ. 3-րդ, գլուխ 4-րդ, Գերմանական
իդեալիստական փիլիսոփայությունը:

Թ Ա Ժ Ա 4-րդ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅՈՅԵՆԲԱՆԻ ԱՍՏԵՐԻԱԼԻԶՄԸ

Գերմանիան 19-րդ դարի 30—40 ական թվականներում
Հեղելյան դպրոցի քայլայտան սոցիալ կուլտուրական
սեր:

Գերմանիա 1848 թվի նախորյակին է, առաջ առաջ և
(1804—1872) վորպես հեղափոխական բուրժուական կամուկա-

տիայի ներկայացուցիչ, Մարքսի թեզերը Ֆոյերբախի մասին: Փե-
լիսովայության հիմնական հարցի մատերիալիստական լուծումը:
Սուբյեկտի և որյեկտի միասնության ուսմունքը: Անտրոպոլո-
գիզմ: Ֆոյերբախի իմացարանությունը: Ադնոստիցիզմի քննա-
դատությունը: Հեղելի իդեալիզմի քննադատությունը: Հեղելյան
դիալիկտիկայի թերապնահատումը Ֆոյերբախի կողմից: Սիրո կը-
րոնը: Ֆոյերբախի հասարակական ուսմունքի իդեալիզմը: Ֆոյեր-
բախի բարոյագիտության բուրժուական-ուստիլիտուրական բնույ-
թը: Պլեսանտվի, մեխանիստների և մենշիկով իդեալիստների
հայացքների քննադատությունը Ֆոյերբախի փիլիսոփայության
հարցում: Ֆոյերբախի տեղը փիլիսոփայության պատմության
մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆ. Են գելս.—Լյուգվիկ Ֆոյերբախ:

Կ. Մարքս.—Թեզեր Ֆոյերբախի մասին:

В. И. Ленин.—философские тетради, стр. 57—73.

Վ. Ի. Ենին.—Մարքս-Ենգելս-մարքսիզմ:

Հոգածներ՝

Մարքսիզմի յերեք աղբյուրները և յերեք բաղկացուցիչ մասերը:
Կարլ Մարքս, «Փիլիսոփայական մատերիալիզմ» հատվածը,

Թեմա 5-րդ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ
ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. Կ. ՄԱՐՔՍ (1818—1883), Ֆ. ԵՆԳԵԼՍ
(1820—1895)

Արդյունաբերության դարդացումը և բանվորական շարժու-
մըն Անգլիայում, Թրանսիայում և Գերմանիայում 19-րդ դարի
սկզբում: Գերմանիայի քաղաքական և տնտեսական դարդացման
յուրահատկությունը: Ընկեր Ստալինը Գերմանիայի՝ վորպես
մարքսիզմի հայրենիքի մասին:

Մարքսի և Ենգելսի փիլիսոփայության դարձացման վաղ
շրջանը: Գերմանական կլասիկ փիլիսոփայության Մարքսի ու-
սումնասիրումը: Մարքսի դոկտորական դիսերտացիան (1841 թ.):
Փիլիսոփայությունը քաղաքականության հետ կապելու Մարքսի
ձգտումը: Մարքսի աթեիզմը: Մարքսը վորպես ձախ հեղելական

և նրա հաստուել դիրքը ձախ հեղեղականության մեջ, ենգերիքաղականության մեջ, ենգերիքաղական և զբական գործունեյության սկիզբը: Ենգելսի մասնակցությունը յերիտասարդ հեղեղականության շարժման մեջ և պայքարը Շելլինգի ու հակցինն գործունեյության գեմ Յերլինուում:

Մարքսի և ենգելսի «Հանուույան թերթում» աշխատելու շրջանը և իդեալիզմից մատերիալիզմին ու հեղովովական դեմոկրատիզմից կոմունիզմին անցնելու սկիզբը (1842): Մարքսի և ենգելսի ոլրակտիկ քաղաքական գործունեյության գերը նրանց Փիլիսոփայական զարգացման մեջ: Մարքսի և ենգելսի կողմից քաղաքատնտեսության և ուտոպիական սոցիալիզմի ուսումնասիրությունը [Ֆոյերբախի փիլիսոփայության ազգեցությունը Մարքսի և ենգելսի փիլիսոփայական զարգացման վրա: Մարքսի հոգվածները հեգելյան «Իրավունքի փիլիսոփայության» ու հրեական հարցի մասին «Գերմանո-ֆրանսիական տարիքը» ու նրա անցումը գեպի կոմունիզմ և մատերիալիզմ (1843): Անգլիայի բանվորական շարժման ազգեցությունը ենգելսի փիլիսոփայական հայացքների ձեւալորման վրա: Ենգելսի հոգվածները Անգլիայի մասին, պրոլետարիատի պատմական գերի և հասարակական կյանքի նյութական հիմքերի նշանակության պարզաբանումը (1842—1844), Բուրժուական դեմոկրատիզմի քննադատությունը ենգելսի կողմից, նրա անցումը գեպի կոմունիզմ և մատերիալիզմ: Մարքսի և ենգելսի մերձեցումը (1844) և նրանց համատեղ գործունեյության նշանակությունը:

Հեգելյան իդեալիզմի և Ֆոյերբախի մատերիալիզմի քննադատությունը Մարքսի և ենգելսի կողմից: Մարքսի-ենգելսի դիալեկտիկական մատերիալիզմի ստեղծումը: «Սուրբ ընտանիք», «Գերմանական իդիոլոգիա» «Թեզեր Ֆոյերբախի մասին», «Կոմունիստական կուսակցության մանիֆիստը», «Կապիտալ», «Անտի-Դյուրինգ» և այլ աշխատությունները: Պայքար ձախ հեղեղական-ների լուրժուական-իդեալիստական զաղափարախոսության գեմ: Պայքար անարիխուաների, «Ճշմարիտ սոցիալիստների», պրուդուսիստների և ուրիշների գեմ:

Նախընթաց ամրող փիլիսոփայության քննադատությունը, գիտության և պրոլետարիատի գասակարդացին պայքարի պարզացումը ընդհանրացումը: Ենգելսը յերեք մեծ գյուտերի (հներդիայի փոխակերպման որևէքի՝ Մայեր 1842 և Զոուլ 1843, որդանական

բջիջի գյուղի՝ Շվանն և Շլեզիկն 1838—39 և Դարվինի՝ ահսակ-
ների ծաղկան թեսրիայի 1859) նշանակության մտաին. Մարք-
սինդիկատի գերը վորպես առաջին պրալետարական կուսակ-
ցության՝ «Կոմունիստների միության» առաջնորդների և կազմա-
կերպիչների: «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և
պրոլետարական աշխարհայացքի գիտա-փիլիսոփայական հիմ-
քերի ստեղծումը Մարքսի և Ենդելսի կողմից: Ենինն ու Ստո-
մինը մարքսիզմի վորպես ամբողջական փիլիսոփայուկան աշխար-
հայացքի մտին:

Մարքսի և Ենդելսի փիլիսոփայական եվոլյուցիայի վերա-
բերյալ Պիետանովի հայացքների քննադատությունը: Պայքար
մենշևիկող իգեալիստների և մեխանիստների գեմ Մարքսի և Են-
դելսի փիլիսոփայական դարձացման հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. Ի. Ենին.—Մարքս-Ենդելս-մարքսիզմ (կամ Յերկհատորյակ)
Հոգած ածներ՝

Կարլ Մարքս (ամբողջը):

Ֆրիզրիխ Ենդելս:

Ճառ Մարքսի-Ենդելսի հուշարձանի բացման առթիվ.
Մարքսիզմի յիշեք աղբյուրները, յիշեք բաղկացուցիչ մա-
սերը:

Կարլ Մարքսի ուսմունքի ոլաւուկան բախտը:

Բ. Ստալին.—Լենինիզմի հարցերը. Լենինիզմի հիմունքների
մասին, գլուխներ՝ 1, 2, 3-րդ:

Նույն գրքում. Զբույց ամերիկյան առաջին բանվորական
պատգամավորների հետ, ընկեր Ստալինի պատասխանը պատ-
ղամավորության առաջին հարցերն:

Թեժա 6-րդ. ՓիլիՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՈՒՍԱՍԱ-
ՆՈՒՄ 18—19-րդ դԱՐԵՐՈՒՄ

ա) Բուռսաստանի հեղափոխական շարժման լենինյան-ստալի-
նյան պերփողացումը վորպես հիմք Բուռսաստանի փիլիսոփայու-
թյան զարգացման պերփողացման: Փիլիսոփայության պատմու-
մատերիալիստական փիլիսոփայության պայքարի պատմություն

և ընդգեմ ու ակալցիոն, իդեալիստական վիլիստիայության ու տեր-
տերականության: 18-րդ դարի Թուաստանի սոցիալ-քաղաքա-
կան բնութագրումը: Արեւայան գիտության ազգեցության ներ-
թափանցումը Թուաստան Պետրոս 1-ինի սեփորմների կապակ-
ցությամբ:

Մ. Լոմոնոսով (1711—1765) վորպես ժառանքիալիստ իր
բնագիտական հայացքներով:

Ա. Ռադիչէնկ (1749—1802): Ռադիչէնկի աշխարհայացքի
հակածորտափական, իր տեսդիմունելով բուրժուական բնույթը:
19-րդ դարի ֆրանսիական հեղափոխության գաղափարների և ֆը-
րանսիական մատերիալիստների հայացքների աղքեցությունը Ռա-
դիչէնկի վրա: Ռադիչէնկի սենսուալիստական իմացաբանությունը:
Ռադիչէնկի հայացքները մատերիալիստ, շարժման, ժամանակի և աւ-
րածության վերաբերյալ՝ Դիմուտական գծեր Ռադիչէնկի վիլիսո-
փայության մեջ: Ռադիչէնկի մատերիալիզմի անհետեղականու-
թյունը:

Պ. Զատարե (1793—1856): 19-րդ դարի 20-ական և 30-ա-
կան թվականների Թուաստանի բնութագրումը: Արեւականու-
թյան և սլավյանոֆիլության ծագումը, վորպես յերկու հասա-
րակական-քաղաքական հստանքների՝ սուսական հասարակական
մաքի մեջ: Զատարյանվը՝ Արեւականության հիմնադիր՝ Զատա-
րյանվի «Փիլիսոփայական նամակները» («Философские письма»)
(1836) և նրանց հասարակական նշանակությունը: Միստիցիզմի
տարրերը Զատարյանվի հայացքների մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. Ի. Ենին.—«Վելիկոռուսների աղքային հպարտության մա-
սին. (Ենին-Ստալին, ըստիր յերկեր յերկու հատորի,
հատոր 1-ին, էջ՝ 682—686):

В. И. Ленин.—Соч. том 17-ый, Из прошлого рабочей печати
в России.

В. И. Ленин.—Соч. том. 16-ый, Роль сословий и классов
в освободительном движении.

Վ. Ի. Ենին.—«Զախության» մանկական հիվանդությունը կո-
ճունիզմի մեջ» գլ. 2-րդ:

Г. В. Плеханов.—Соч. т. 21-ый, гл. 2-ая, т. 22-ой, гл. 7-ая.

բ) Լենինը Բելինսկու, Հերցենի, Զերնիշչևսկու՝ վորպես ոռւսական սոցիալ դեմոկրատիայի նախորդների մասին:

Վ. Բելինսկին (1811—1848) վորպես հեղափոխական բուրժուական դեմոկրատիայի ներկայացուցիչ: Բելինսկին վորպես լուսավորիչ: Բելինսկու քաղաքական և փելիսոփայական զարգացումը: Բելինսկու անցումը իրականության հետ հաջողելուց դեպի հեղափոխական դեմոկրատիզմը 40-ական թվականների սկզբունք: Պետականովի հայացքների քննադատությունը Բելինսկու աշխարհայացքի դասակարգային հիմքի և զարդացման վերաբերյալ:

Ա. Հերցենը (1812—1870) վորպես Ծուսաստանի բուրժուական դեմոկրատական հեղափոխության զաղափարախոս: «Նամակներ ընության ուսումնասիրության մասին» (1845) և նրանց նշանակությունը, Հերցենը Հեղելի փիլիսոփայության վորպես «հեղափոխության հանրահաշվի» մասին: Հերցենի իմացաբանությունը: Ֆոյերբախականությունը և ձախ հեղելականությունը Հերցենի աշխարհայացքի մեջ: Հերցենը վորպես լուսավորիչ: Լենինը Հերցենի մասին:

Ն. Զերնիշչևսկի (1828—1889). Նրա աշխարհայացքի սոցիալական և զաղափարական ակունքները: Անտրոպոլոգիզմը Զերնիշչևսկու փիլիսոփայության մեջ: Խոյերբախի և Հեղելի փիլիսոփայության ազգեցությունը Զերնիշչևսկու աշխարհայացքի վրա: Հեղելի փիլիսոփայության քննադատությունը: Զերնիշչևսկու սոցիալական ուսմունքը: Իդեալիզմի տարրերը Զերնիշչևսկու սոցիալական հայացքներում: Զերնիշչևսկին վորպես լուսավորիչ: Մարքսը և Լենինը Զերնիշչևսկու մասին:

Դ. Պիսարել (1840—1868) վորպես քաղաքային բուրժուական դեմոկրատիայի, բուրժուական ինտելիգենցիայի պրոդրեսիվ շերտերի զաղափարախոս: Պիսարելը յերևակայության և իրականության փոխարարերության մասին: Պիսարելի պատսուբյեկտիվ իդեալիզմը: Պիսարելի եղույթուցիան դեպի նախողնիկների

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՈՒՆ

В. И. Ленин.—Соч. том 2-ой, От какого наследства мы отказываемся?

Վ. Ի. Լենին.—Խոչ անել (Լենին-Ստալին, յերկու հատորով, հատ,

В. И. Ленин.—Соч. т. 15-ый. Памяти Герцена.

В. И. Ленин.—Философские тетради, стр. 336.

Վ. Ի. Լենին.—Համ. 13-րդ, հջ 412—414.

Белинский.—Литературные мечтания.

Белинский.—Письмо к Гоголю.

Чернышевский.—Антрапологический принцип в философии.

том-6-ой.

Г. В. Плеханов.—Соч. т. 5-ый, Н. Г. Чернышевский.

գ) Գ. Պլեխանով (1856—1918): Ռուսաստանի կապիտալիստական զարգացումը և նարողնիկության թեորիայի ու պրակտիկայի խորակումը, Պլեխանովի գերը «Զորնի պերեղել» ուժ («Черный передел»):

«Աշխատանքի ազատագրման» խմբակը (1883): Պլեխանովի պայքարը ընդգեմ նարողնիկության, ոեվլիոնիզմի և կանտականության: Լեզու մարքսիզմի և եկոնոմիզմի քննադատությունը Պլեխանովի կողմից: Պլեխանովի գերը մախիզմի գեմ ողված պայքարում: Լենինը Պլեխանովի՝ վորպես մարքսիստական փիլիսոփայության ականավոր պոպուլյարի վառայությունուների մասին: Պլեխանովի փիլիսոփայական աշխատությունների արժեքավորումը Լենինի կողմից:

Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության նախապատրաստման շրջանը, ՌՍԴԲԿ և համագումարը և կուսակցության պառակտումը: Պլեխանովի անցումը մինչևիզմի դիրքերին (1903 թ.) և նրա սիրաներն ու նահանջները հեղափոխական մարօսիդմից: Պլեխանովի սիրաները փիլիսոփայության կուսակցականության հարցում: Դիալեկտիկայի՝ վորպես մարքսիզմի իմացարանության չըմբռնումը Պլեխանովի կողմից: Պլեխանովի ագնոստիկական սիրաները (հիերոգլիֆների թեորիան): Պլեխանովի սիրաները պատմական մատերիալիզմի հարցերում:

Եերևույթների կոնկրետ պատմական մոտեցման փոխարինումը Պլեխանովի կողմից վերացական տրամաբանական սիրաներով (որինակ 1905 թ. հեղափոխության բնույթի հարցում):

Պլեխանովի փիլիսոփայական սիրաների արժատները: Թեորիայի խզումը պրակտիկայից, փիլիսոփայության խզումը քաղաքականությունից: Պլեխանովի փիլիսոփայական սիրաների կապը նրա մենչևիկյան քաղաքական դիրքավորման հետ:

Բնկ. Ստուլինը լենինի և Պետանովի դերի մասին մարքսիզմի վելու փառագացման մեջ: Մարքսիզմի վելու սովորության զարգացման հարցերում լենինի և Պետանովի դերի աղավաղումը մեխանիստների և մենշևիկով իդեալիստների կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

В. И. Ленин.—Соч., том 10-ый, № 231.

Ч. ի. Լենին.—Մարքսիզմ և մելիզիոնիզմ (ահս Լենինի՝ Մարքս-Ենգելս-մարքսիզմ պրբույկը կամ Լենին, Ընտիրյակիր յերկու համարով),

В. И. Ленин.—Соч. т. 17-ый, Плеханов, не знающий, чего он хочет.

Ч. ի. Լենին.—Յերկիրի ժողովածու, հասոր 26, № 192.

Ч. ի. Լենին.—Պատություն և հեղափոխություն, գլուխ 4-րդ, պարագր. 1:

В. И. Ленин.—Философские тетради, стр. 173, 283, 325, 327, 416:

Ի. Ստուլին.—Լենինիզմի հարցերը. Լենինիզմի հիմունքների ձևուն, գլուխ 3-րդ—Թեորիա:

Г. В. Плеханов.—Соч. т. 11-ый, статьи против Бернштейна и Струве.

Г. В. Плеханов.—Соч. т. 17-ый Письма Богданову.

Հասկած լի. ԴԱՎԱԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ ՀԵՄՈՒՆՔՆԵՐԸ

Թեմա 7-րդ. ՄԱՏԵՐԻԱԼԻՍՄԱԿԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ ՎՈՐԳԵՍ
ԴԻՑՈՒԹՅՈՒՆ

Դիալեկտիկական մատերիալիզմը պրոլետարիատի վելիսափայությունն է: Մատերիալիստական դիալեկտիկան վորպես զիտույն բնության, հասարակության և մարդկային մտածողության զարգացման ընդհանուր որենքների մասին, Պատմականի և տրամարանականի միասնությունը մատերիալիստական դիալեկտիկայի մեջ: Մատերիալիստական դիալեկտիկան վորպես

մարքսիզմ-լենինիզմի իմացաբանությունը և արամաբանությունը: Աշխարհայացքի և մեթոդի միանությունը: Մարքսիզմ-լենինիզմը փիլիսոփայության կուսակցականության մասին:

Դիալեկտիկական մատերիալիզմը և բնագիտությունը: Ենդելմն ու Լենինը դիալեկտիկական մատերիալիզմի նշանակության մասին բնագիտության համար: Ժամանակակից բնագիտության զարգացումը և դիալեկտիկական մատերիալիզմը: Պատմական նոր դարաշրջանում պրոլետարիատի գասակարգային պայքարի փորձի և բնագիտական հայտնագործությունների ընդհանրացման հիման վրա մատերիալիստական դիալեկտիկալիցի զարգացումը Լենինի և Ստալինի կողմից:

Մարքսիզմի փիլիսոփայության ժխտումը և ինտերնացիոնալիզմի թեորետիկների կողմից և նրա փոխարինումը կանոնակառությամբ, մակրոզմով և բուրժուական փիլիսոփայության այլ ուղղություններով: Լենինի և Ստալինի պայքարը ընդդեմ բուրժուական թեորիաների, ուկիցիոնիզմի և ոպորտունիզմի: Պայքար մատերիալիստական դիալեկտիկայի մեխանիստական և մենշևիկության դեկալիտատական աղավաղությունների գեմ: Մենշևիկուդ իդեալիզմը և մեխանիզմը թեորիական զենք և հականեղափոխական արոցկիզմի և կապիտալիզմի աշ սեստավատորների ձեռքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆ. Ենգելս.—Սնուբ-Դյուրինգ, եջ՝ 28—34, 14—20:

Ֆ. Ենգելս.—Բնության դիալեկտիկա, եջ՝ 140—151, 395, 335—339, 5, 107—116, 326—334, 35:

Ֆ. Ենգելս.—Լյուգվիկ Ֆոյերբախ, եջ՝ 41—49:

В. И. Ленин.—Философские тетради, стр. 94, 95, 170, 176,

181, 182, 240, 323:

Դ. Ի. Լենին.—Մարքս-Ենդելմարքսիզմ գրքից հետեւալ հոգածածությունը:

Վարչ. Մարքս (այսուղից 2 գլուխներ՝ «Փիլիսոփա-կար» և «Դիալեկտիկա»).

յական մատերիալիզմ» և «Դիալեկտիկա»).

Մարքսի սամակադրությունը Ենդելմի հետ.

Մարքսիզմի յերեք աղբյուրները և յերեք բաղկացուցիչ մասերը.

Մարքսիզմի մատերիալիզմի նշանակության մասին.

կ. Բերիա, —Անդրկովկասի բոլցեկյան կազմակերպությունների
պատմության հարցի շուրջը, զլուխ Զ-րդ:

ի. Ստալին. —Լենինիզմի հարցերը. Լենինիզմի հիմունքների
մասին, գլուխ Զ-րդ—Մհթող:

Թեժա 8-րդ. ԴիԱԼԵԿՏԻԿՈՒԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ ՄԱՏԵՐԻԱՑԻ,
ՇԱԲԺՄԱՆ, ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մատերիայի փիլիսոփայական և բնագիտական հասկացու-
թյուն. Բնագիտական նոր հայտնագործումները և Փիդիկյայի հիմ-
նական հասկացությունների վերակազմությունը, Բուրժուական
բնագիտության ճգնաժամը XIX դարի վերջում և XX դարի
սկզբում. Լենինը այժմյան բնագիտության ճգնաժամի հյության,
արժատների և այդ ճգնաժամից հեղափոխական յելքի մասին:
Լենինի պայքարը մախիզմի դեմ:

Շարժումը վորպես մատերիայի գոյության ձև: Մատերի-
այի և շարժման անխղելիությունը: Շարժման և մատերիայի
պրոբլեմը փիլիսոփայության և գիտության պատմության մեջ:
Շարժման և մատերիայի անջատումը Նյուտոնի մեխանիկայի
մեջ: Մեխանիստական ուսմունքը ուժի մասին և նրա կազմը թեո-
րիայի հետ: Ոստվայլդի եներգիատիզմի լինինյան քննադատու-
թյունը: Շարժման մշտնչենականությունն ու անստեղծելիու-
թյունը և նրա բնագիտական արտահայտությունը (եներգիայի
պահպանման և փոխակերպման որենքը), ենդելը այդ որենքի
վրակական և քանակական մեկնաբանման հետ: Մատերիայի ընդհատու-
թյան և անընդհատության պրոբլեմը: Տերմոդինամիկայի յերկ-
րորդ որենքը և եներգիայի ցրման (ենտրոպիայի) պրոբլեմը: Այդ
որենքի մետաֆիլական մեկնաբանությունը և նրանից արվող
իդեալիստական հետեւկությունները: Տերմոդինամիկայի յերկրորդ
սկզբունքի բնութագրումը ենդելը կողմից: Շարժումը և հավա-
սարակությունն, նրանց միասնությունը: Շարժումը վորպես առ-
հասարակ փոփոխություն: Մատերիայի շարժման ձևերի բազմա-
կերպությունը և նրանց սպիցիքի բնույթը: Մարքս-լենինյան
ուսմունքը ինքնաշարժման մասին: Պայքար մատերիայի և շարժ-
ման վերաբերյալ դիալիտիկական մատերիալիզմի ուսմունքի մեջ:

խանիստական ու մենչելիկող իդեալիստական աղավաղութների դեմ:
Ժամանակն ու տարածությունը վորպես մատերիայի գոյության որբեկալի ձևեր: Ժամանակի և տարածության պրոբլեմը փիլիսոփայության ու գիտության պատմության մեջ: Բացարձակ տարածության և ժամանակի դաշտավարը Նյուտոնի ուսմունքի մեջ: Ժամանակն ու տարածության Այնշտայնի հարաբերականության թեորիայի մեջ: Այդ թեորիայի իդեալիստական մեկնաբանումը Ենդիլսի պայքարը ազնուսիցիդմի գեմ տարածության և ժամանակի հարցում: Ժամանակի և տարածության հարցում մախիստների իդեալիստական հայացքների քննադատությունը կենինի կողմէց: Նորկանտականների, Նիցշի, Բերգունի ռեալիզմին իդեալիստական հայացքների քննադատությունը շարժման, ժամանակի և տարածության հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ֆ. Ենդիլս.—Անտի-Դյուրինգ, եջ՝ 59—60, 80—81. Բնության դիալեկտիկա, եջ՝ 124—129, 132—133 20—22, 52, 17—18, 26, 303—323, 151—155:
